



ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՀԱՄԱԹ 8 ԴԵԿՏԵՄ, 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Ի ՏԵՍՈՒՆԵՍ

Ինչպէս յայտնի է, ամէն տարի, երբ Բարձր. Խըտիվը Ալեքսանդրիայէն կը վերադառնայ Գահիրէ. Վսեմ. Աբրահամ փաշայի ազարակին մօտ գտնուող Տեսուներսի կայարանը նորին վսեմութեան ծախքով շքեղօրէն կը զարդարուի սլոններու համար Բարձր. Խըտիվին անցքը:

Այս տարի ևս, երբ անցած շաբթու, Բարձր. Խըտիվը գնաց իր մայրաքաղաքը, նոյն փաշուն զարդարանքները եղած էին, բայց բացառիկ պերճութեամբ մը:

Մաղիկներ, գորգեր, գոյնզգոյն զարդեր և զրօշակներ հոյակապ սալօնի մը վերածած էին կայարանը: Նուագածուաց խումբ մը յատկապէս բերուած էր, բաց աստի զինուորներու գումարտակ մը բարեի կեցած էր կայարանին երկայնքը: Վսեմ. Աբրահամ փաշայի որդին՝ Յակօր պէյ ընկերակցութեամբ Տ. Միհրան Թեյեանի և մի քան

նի Եւրոպացի բարձրաստիճան հիւրերու, շէյխերու, օմոնէներուն եւ անպացի երևելիներու կը սպասէր խըտիվական յատուկ կառախմբին:

Երբ կառախումբը մօտեցաւ Տեսուներսի իր գնացքը դանդաղեցուց և երբ կայարան հասաւ, առաջին անգամ ըլլալով կանգ առաւ և Բարձր. Խըտիվը ողջունեց Յակօր պէյը և իր գոհունակութիւնը յայանեց իրեն եղած ընդունելութեան համար, նոյն միջոցին նուագածուաց խումբը խըտիվական քայլերգը կը հնչեցնէր: Բարձր. Խըտիվին գահաժառանգը և միւս իշխանագունները որոնք ներքինապետ էլմաս պէյի հսկողութեան տակ քովի վակոնին մէջ կը գտնուէին, նմանապէս ողջունեցին ներկաներէն:

Յետոյ կառախումբը ճամբայ ելաւ: Քիչ ետքը անցաւ Բարձր. Խըտիվուհին կառախումբը որ նոյնպէս ողջունուեցաւ ներկաներէն:

Ի ՊԵՏՍ ԱՊԱԴԱՅ ՊԱՏՄԱՐԱՆԻՅ

Անցածները ծանուցած էինք մեծանուն գըրդգէտ Լևոն Բաշալեանի գալուստը Եգիպտոս: Մեր բարեկամը երեք շաբաթի չափ Գահիրէ՛ իր ընտանեաց քով՝ մնալէ ետքը, հինգշաբթի օրէն ի վեր կը գտնուի Ալեքսանդրիա ուրկէ յառաջիկայ երեքշաբթի օր, ռուսական շոգենաւով, պի-

տի վերագառնայ Կովկաս անձնական գործերով:

Լեւոն Բաշալեան այսօր, կէսօրէն առաջ, այցելած է Պօղոսեան վարժարանը, ընկերակցութեամբ հոգաբարձութեան մէկ քանի անդամներուն և խիստ գոհ մնացած է հոն տիրող բարեկարգութենէն և մաքրութենէն:

Կարձանագրենք Լեւոն Բաշալեանի քաջալերիչ գնահատումը իբրև առաջին բարենիշը որ կը ստանայ նորրինտիր հոգաբարձութիւնը:

Նորին Վսեմութիւն Պօղոս փաշա Նուպար այս երկուշաբթի առաւօտ վերջնականապէս կը հասնի Եգիպտոս:

Ստացանք Վահան Թէքէեանի տնօրինութեամբ հրատարակուող «Նոր Ժամանակներ» շաբաթաթերթին առաջին թիւը, լի սրամիտ ու կայծկտոյ յօդուածիկներով:

Մեր բարեկամը, ճարտար և փորձառու վազողի մը նման, առաջին քայլէն չէ ուզած բոլոր ուժը թափել շուտով չյոգնելու մտահոգութեամբ, այլ իմաստութիւն համարած է անշուշտ հետըզհետէ իր վազքը զօրացնել սրամտութեան ճամբուն մէջ:

Երկրորդ թիւը առաջինէն լաւագոյն պիտի

ըլլայ, վստահ եմք ասոր և յաջորդները երկրորդէն գերազանց:

Արտանց յաջողութիւններ մեր պաշտօնակից Բենիամինին:

Ալեքսանդրիոյ գեղարաններուն մէջ հունեաաիի մթերքը սպառած ըլլալով, Արժ. Ազաւնունի առաջնորդ հայր սուրբը վերադարձած է Գահիրէ:

Մեր վաղանցուկ աշխատակից տօքթ. Յակոբեան, որուն Ս. Գրոց մասին ունեցած հմտութիւնը անուրանալի է, այսօր խրտիվական շոգենաւով կը մեկնի Բորթ-Սայիտ, անկէ դէպի Ատէն, Պոմպէյ, Պուշիր, Պարսկաստան և Պաղտատ երթալու համար:

Ողջե՛րթ մեր բարեկամին:

Ո՞ր կը ԾԱԽՈՒԻ

«Նոր ժամանակներ» շաբաթաթերթը, որուն երկրորդ թիւն ալ ստացանք, Ալեքսանդրիոյ մէջ ձեռքէ կը ծախուի Սարաֆիէ՝ Սարաֆ Գառնիկ աղայի քով, Շէրիֆ փաշա՝ քրտազգաւոր թերլալեանի խանութը և Աթթարին կաթնավաճառ Ղուկասի մօտ: Հատը մէկ զը: ողջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ ԲԱՂՈՒԱԾ ԷՋ ՄԸ

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

1891 Թուականի ամառն էր Բերայի Champs élisés ի դիմաց գտնուող պանդոկներից մէկի ծառային յանձնումէի զողջոջուն ձեռքով գրուած այցետոմսը.

«Մեծարգոյ պ. Պետրոսեանց, պաղատագին կը խնդրեմ ձեզմէ մի քանի վայրկեանի ունկնդրութիւն շնորհել ինձ խօսելու համար հարցի մը մասին որ կը վերաբերի ձեր Պօլիս այցելութեան նպատակին և որ ինձ համար կենսական նշանակութիւն ունի»

Ինչ յետոյ ինձ առաջնորդում էին դերասան Գ. Պետրոսեանի սենեակը. նա եկած էր Պօլիս, Թիֆլիսի հայոց «Դրամական ընկերութեան» կողմից 1891-92 թատերաշրջանի համար դերասաններ և դերասանուհիներ հրաւիրելու յատուկ պաշտօնով:

Ադամեանի նիհար կազմուածքին ու տոգոյն գէմքին վրայէն կազմած լինելով գաղափարս հայ դերասանի մասին, անակնկալի տարօրինակ զգացում մունեցայ տեսնելով դիմացս բարձրահասակ, գէր, կլոր ու կարմիր գէմքով հսկայ մը:

-Երբի սա նա չէ (դերասանը) խմբի «խմբէզարիօ» պէտք է լինի, մտածեցի ինքնիրենս. և վրաս բնազգաբար զող մը գալով թոթովեցի .-Ներեցէք . . . պ Պետրոսեան . . .

-Նա եմ, բարեկամս, ի՞նչ կը ցանկանայիք:

-Աս . . .

Բայց իսկոյն խելք բրի. «Սա միևնոյն ժամանակ գործի մարդ էլ է՝ Ուրեմն՝ դերասանութեան մէջ էլ կարելի է ձգեր և գործի մարդ լինել, է՛, աւելի լաւ, հօրս կ'ասեմ ու խեղճը գոնէ քիչ մը կը մխիթարուի» մտածեցի ազատ չունջ մ'առնելով:

- Ահա ինչ. ես եկեր եմ խնդրելու ձեզ որ զիս ձեր հետ Թիֆլիս տանիք:

- Բայց դեռ շատ փոքր էք. սիրելիս. ո՞ր խնդրումն էք խաղում:

- Ոչ մի. դեռ նոր դպրոց թողեր ... փախեր եմ Բայց հոգ չէ, ես կ'աշխատիմ. նախ անխօս զինւորի դերեր կուտաք, յետոյ խօսող զինւորի և հետզհետէ եթէ գոհ մնաք աւելի մեծ դերեր կը վստահանաք, և կը տեսնէք, ապահով եմ որ գոհ կը մնաք:

- Բայց, բարեկամս, ես դրա համար չեմ եկել Պոլիս. և, բացի դրանից, ես ի՞նչ ոռճիկ կարող եմ առաջարկել ձեզ այդ դերերի համար:

- Քիչ մը հաց և անկողին:

Զարմացած երեսիս նայից. յետոյ սկսեց ծիծաղել:

- Ի՞նչ ոգեորութիւն, իսկ և իսկ Պոլսահայի «տէմպէրամէնտ», ուսման թի՛ղմ, Դէհ, ի՞նչ ասեմ... ան, ի դէպ, թի՛նքը կարգացել էք:

- Աղամեանը խաղաց:

- Ա՛հ, այո՛, Աղամեանը, նա էլ խանդավառի մէկն էր. Յետոյ հազիւ լսելի ձայնով մրթմրթաց. «Դեռ լաւ է որ ամուսնացած չէք, երկխաներ չունէք»: Յետոյ ինձ դառնալով. - Այսու ամենայնիւ ես պարտ եմ համարուլ մի քանի խորհուրդներ սալ ձեզ, նախազգուշացնել, որպէս զի լաւ մտածէք և...:

- Անօգուտ է, պր. Պետրոսեան, ես արդէն եր-

դում եմ ըրած:

- Երգում... ինչի վրայ:
- Ազամեանի գերեզմանի վրայ:
- Ա՛ա՛ . . .

Երկար լուսիւն, բազկաթողին մէջ թաղուած,
սուր նայուածքով մը զարմանքով ու քմծիծաղով խառ-
նուած երկար դիտում էր ինձ ոտից մինչև գլուխ:
Դատաւճիռը սպասող յանցապարտի նման զոզում էի
ամբողջ էութեամբս:

- Դէհ, բարեկամս, քանի որ երգում էք արած
(այս բառի վրայ շեշտեց), էլ ոչինչ չունիմ ձեզ ասե-
լու: Յայտնեցէք ձեր պայմանները:

- . . .

- Որքան ոտձիկ էք պահանջում:

- Որքան որ հարկաւոր է հաց և անկողին ունե-
նալու համար:

- 40 բուպլի լաւ է:

- Չգիտեմ. կարելի է հաց և անկողին ունենալ
Թիֆլիս այդ գումարով:

- Օ՛, աւելին իսկ:

- Այն ժամանակ կարող էք պահսեցնել:

Բարձրաձայն քահ քահ մը ձգելով ոտքի ելաւ ու
ինձ դէպի դուռը առաջնորդելով:

- Վազը երեկոյ եկէք, և ես ձեզ կը հաղորդեմ կո-
միտէտի հեռագրով պատասխանը:

Յետոյ իմացայ որ շատ ոգևորուած հեռագիր էր
ուռած Թիֆլիս:

Կարելի է երեակայել թէ ինչպէս անցուցի այդ
գիշերը: Հետեեալ օր նշանակուած ժամէն երկու ժամ
առաջ պանդոկի դրան առաջ պահնորդութիւն էի ա-
նում:

Վերջապէս կառքէ մը վար ցատկեց Պետրոսեան և զիս տեսնելով ձեռքը զրպանը տարաւ ու հեռագիր մը հանելով ինձ մեկնեց:

Աչքերս գոցեցի, չէի համարձակուում նայել:

- Ի՞նչ լուր, թոթովեցի:

- Կարդացէք:

Դողդոջուն ձեռքով բացի թուղթը. մի բառ կար միայն, «Ա. ն կ ա ժ է»:

Աչքերս վեր բարձրացուցի. Պետրոսեան՝ գոհունակ ժպիտը երեսին դիտում էր ինձ, հայրական գուրգուրանք մը տեսայ այդ ժպիտին մէջ:

Աչքերս փայլում էին, թևերը բացաւ ու գրկին մէջ խեղդեց հեծկտանքը:

Առաջին արցունքներս էին որ ընդունում էր նա . . . :

- Դէհ, բարեկամ, գնո՛ւմ ենք:

- Գնանք:

- Օ՛, զեռ սպասիր սիրելիս. միտիաս չվերջացաւ, միայն քեզանով չէ որ պիտի կարողանամ կազմել խումբը: Գնա՛, պատրաստութիւններդ տես, ու մի օրից եկ ինձ մօտ:

(Շարունակելի)

Տ. Ե. Մ. ի Ա.Ռ.Թ.Ի.Ի

Հետևեալը մեզի զրկուած է հրատարակութեան խնդրանքով:

«Ազատ խօսքը» ի վերջին 1 Դեկտ. 29-ի թիւին մէջ կարդացի «Միութենականներու անմիաբանութիւն»ը վերտառութիւնը կրող գրութիւն մը:

Այլ գրութեան մէջ ակնարկուած «գեռաբուսիկ» երիտասարդը ես ըլլալով՝ պարտք կը սեպեմ ներկայովս յայտարարելու թէ «Արժանահաւատ» անձնաւորութեանդ տուած տեղեկութիւնները թիւր՝ և բարեմտօրէն խեղաթիւրուած լւրեր են:

Կարենալ այս ըսածներս հաստատելու համար ձեզի պիտի ընեմ հինգշաբթի գիշերուան ժողովին հակիրճ պատմականը՝ որուն ճշմարտութեանը կրնան վկայել պ. Յ. Ազասեր, Ա. Բապուճեան, Յ. Փափազեան՝ որոնք «Տիգրան-Երկաթ» նորակազմ վարչութիւն-յան ձեռնախումբի անդամներն էին, ուրիշներու հետ՝ որոնք բացակայած էին հինգշաբթի գիշերուան ժողովին:

Ես պարտք կը անեմ վերոյիշեալներուն վրայ հրապարակաւ հերքել՝ իմ ըսելիքներուս օտակէ մէկ կէտին ճշմարտութիւնը՝ եթէ երբէք հոն ամենափոքր սուս մը տեսնեն:

Ձանազան պարագաներու բերմամբ «Տիգրան Երկաթ»ի վարչութեան անդամ մնացինք պ. Շ. Հոյեան և ես: Ուզելով հաստատութիւնը դնել լաւագոյն և ամէն տեսակետով ժողովրդական հիմքերու վրայ, հրաւիրեցինք վերոյիշեալ անձերը. որով պիտի ունենայինք վարչութիւն մը խառն՝ ըզկացած կուսակցականներէ և չէզոքներէ: Ժողով մը ըրինք կիրակի 25 Նոյ., և երկրորդ ժողովի օր որոշեցինք հինգշաբթի գիշեր, ժողով իր մասնաւոր օրակարգովը: Երբ որոշեալ

օր ժողովասրահ մտայ զարմանքով տեսայ որ 10-15 հոգի դուրսէն մարդիկ ներս մտան, որոնք եկած էին - վերջը իմացայ- յանձնախումբիս անդամներուն մէկ երկուքին միայն հրաւերովը... ունկընդ- բերու: Չմտնամ հոս ըսելու թէ անոնց մէջը Մէլի հատ Հնչակեան չկար: Յուզուած այս անակնկալէն, ստիպուեցայ յայտարարելու թէ՛

1.- Եկած էի մասնաւոր յանձնախումբի ժողովին համար:

2.- Եթէ երբէք ընդհանուր ժողով մըն էր ըլլալիքը, պատրաստ չէի և հարկ ալ չէի տեսներ մասնակցիլ:

3.- Եթէ յանձնախումբի ժողով էր՝ պէտք էր կամ մենք յանձնախումբս ուրիշ սենեակ մը երթայինք, կամ ներկաները քաշուէին:

Ասոր վրայ ամբողջ ներկաները հասկնալով խնդրին էութիւնը ամենայն հանդարտութեամբ հեռացան ժողովասրահէն:

Ահա՛, պարօն խմբագիր հինգշաբթի գիշերուան «միջադէպին» պատմութիւնը: Ասկէ վերջ գիւրին է հասկնալ թէ ինչ մեծ սխալներ են ձեր «արժանահաւատ» տեղեկատուին, մասնաւորաբար հեռուեալ խօսքերը:

1.- «Հնչակեաններ» ալ եկած էին ժողովի:

2.- «Հնչակեաններ» «Շարժում» կը կարգային և կը խնդային. մանաւանդ «Հնչակեաններ» որոնք միութեան.՞.՞.՞ համար եկած էին:

3.- Յայտարարած եմ թէ «ամէն» Իաշնակ-
յականները պէտք չէ որ ժողովին մասնակցին:

4.- «Ժողովրդային» ժողով էր ընելիքնիս:

5.- Իաշնակցականները (առանց չէզոքնե-
րուն և կարծեցեալ հնչակեաններուն) սաքի և-
լան և մեկնեցան, հն, հն:

Ընդունեցէք պ. խմբագիր՝ յարդանքներուս
հաւատարմքը:

Ս. զե. քս. 5/12/06

Ե. ԲԱՐԱԶԵԱՆ

Մեզ կը հաղորդուի թէ՛ Տիգրան Երկաթ
Ժողովրդային Միութեան նախորդ վարչութենէն
միայն երկու անգամ մնացած ըլլալով՝ կազմուած
է նոր վարչութիւն մը, նոյնպէս առժամեայ հան-
գամանքով: Միանգամայն առաջին ընդհանուր
ժողովի թուական որոշուած է յառաջիկայ մարտ
ամսոյ վերջին կիրակին:

Նորակազմ վարչութեան անդամները հե-
տեւեալներն են:

Պ. Յ. Աղասեր

« Ա. Բապուճճեան

« Շ. Հովիւեան

« Յ. Յակոբեան

« Հ. Զպուքճեան

« Ե. Փափաղեան

« Յ. Փափաղեան

Քիչ օրէն հանրութեան պիտի ներկայացուի նախնական կանոնագիրն:

Վստահ ենք որ ժողովրդական այս կենսական ու օգտակար հաստատութիւնը կանգուն պահելու համար հարկ եղած բարոյական ու նիւթական ամէն քաջախրութիւն չպիտի զլացուի:



ՁԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ

Պօղոսեան վարժարանի հոգաբարձութիւնը որոշած ըլլալով աշակերտաց միօրինակ զգեստ, շինել և միմիայն աղքատներու ձրիաբար նուիրել տօնական օրերու առթիւ, կազմած է հանգանակիչ յանձնախումբ մը, որուն անդամներն են:

Վսեմ. Միքայէլ Պէյ Րէիզեան

Տ. Արամ « Արշակեան

« Ա. « Բապուճճեան

Յանձնախումբը արդէն իսկ հանգանակութեան ձեռնարկած է և ստորագրուած են հետևեալ նուիրատուութիւնները:

Վսեմ. Միքայէլ Պէյ Րէիզեան 20 ոսկի

Տ. Տիգ. Կամսարական 20 «

« Մելքոնեան եղբայր 10 «

Յանձնախումբը շուտով գիմում պիտի ընէ մեր ազգայիններուն որոնք վստահ ենք որ լիովին պիտի օգնեն այս բարենպատակ ձեռնարկին մեր մանուկներուն քիչ մը ուրախութիւն պատճառելու համար:

Անշուշտ աշակերտաց ծնողներէն ալ ինքնա-
բերաբար պիտի մասնակցին այս հանգանակու-
թեան, ցոյց տալու համար թէ իր գնահատեն
եղած ջանքերը վարժարանի բարելաւման համար
և պատրաստ են նիւթապէս ալ օգնելու, եւ բ
պէտքը անհրաժեշտ է:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հինգ տարուան փորձառութենէ յետոյ, կու-
ղամ յայտարարել յարգոյ հասարակութեան, թէ
թէ պատրաստ եմ կատարել շուտով և խնամքով,
մաքսի վերաբերեալ ամէն տեսակ գործողու-
թիւններ, ներածութիւն և արածութիւն, ինչ-
պէս նաև վաճառականական յանձնակատարու-
թիւններ:

Հասցէ՝ Տիրան Յովհաննէսեան

Օրէլ Մօնֆէրաթօ. Աղերսանդրիա

Ա Ձ Դ

Աթթարին փողոցը թիւ 39 խանութին մէջ
իւր վաճառուին հետեւեալ ապրանքները, ամենա-
ընտիր տեսակէն և գոհացուցիչ գիններով:

Ձէյթին եաղ, սապոն, ճերմակ պանիր, կով-
կասի հոչակաւոր սև խավեարը ինչպէս նաև կով-
կասեան և հայկական իշխան և Շամայի ձուկե-
րը, նոյնպէս Եէմէնի խահուէ և այլ նպարիղէնք:

ՍԽԱԽ, ՍԽԱԼ, ՍԽԱԼ

«Նոր ժամանակներ»ու երկրորդ թիւին տասնըմէկերորդ էջին մէջ, ՄԵԿՆՈՒՄ խորագրին տակ կը կարգանք.

«Տ. Լևոն Բաշալեան հինգշաբթի մեկնեցաւ Գահիրէէն. երկու օր Աղեքսանդրիա մնալէ յետոյ, Թրիէսթէի ճամբով կը գառնայ Պարու:»

Որքան սող՝ այնքան սխալ:

Չհնք գիտեր ինչո՞ւ մեր նորածին պաշտօնակիցը անպատճառ Թրիէսթէի ճամբով կ'ուզէ ուղեւորեցնել տաղանգաւոր գրագէտը որ բացարձակապէս և անդառնալի կերպով որոշած է երթալ Ստեփանի ճամբով և ռուսական շոգենաւով:

Եւ ի՞նչ է պատճառը այն մտթ ու շիւնը պատակին որով ժամ առաջ մենէ հեռացուցուի կ'ուզուի մեր թանկագին հիւրը:

Ո՛չ, պարտն Գահիրեցիներ, Լևոն Բաշալեան միայն երկու օր չպիտի մնայ Աղեքսանդրիա, ինչպէս կը թուի ըլլալ, ըստ ձեր օրկանին, ձեր գերագոյն տէնկալութիւնը, այլ ամբողջ հինգ օր և միայն յառաջիկայ եւեքշաբթի պիտի մեկնի ասկէ ու այն ալ կէսօրէն յետոյ:

Իրողութիւնները այսպէս շարաչաք թիւրեւով չէ որ ձեր այրած սրտերը պիտի կրնն մը խիթարուիլ: Մինչև երեքշաբթի մերն է Լևոն Բաշալեանը և Եգիպտոսէն մեկնելէ առաջ մենք վերջին անգամ «ցտեւութիւն» պիտի ըսենք իրեն: Այս թող ըլլայ ձեր պատիժը:

ZINCOGRAPHIE



HENGER NAZARETHIAN
ALEXANDRIE. RUE STAMBOUL

HENGER NAZARETHIAN.



RUE STAMBOUL

ZINCOGRAPHIE

“ԱՐԱՏ ԽՈՒՔ”-ի Պայմանները

ԱՐԱՏ ԽՈՒՔ. 40 ՀԱՍՏԱՐԱՆԻՆԻ ՇԱՐՔ ՕՐԵԸ
Ե՛րկուսի համար բաճկեղևն է.

40 ՔԻՆՔ 40 ՂՐԵ ՈՂՋ
20 ” 20 ” ”

ԱՐՏԱՄԱՆՇԱՆ

ԵՐԿՈՒ 40 ՔԻՆ 10 ՇՈՒՔ
ՈՒՐՄ ” ” 4 ՔԱՌԱԼԻ
ՍՄԵՐԿԱ ” ” 2 ՏԱԼՍԻ

Բաճանկարները կոմիտեի
ՀԱՏԻ: 4 ՂՐԵ ՈՂՋ

“ԱՐԱՏ ԽՈՒՔ”-ի համար բաճկեղևին կամ
որ է և գրառված պետք է ազդել հե-
տևեալ հասցեին:

Կ. Nazarethian
Rue Stamboul

ALEXANDRIE (EGYPTE)

Մանուգրամներ կրկնգինուի՞ն Մանուս
պայմաններով:

Պատասխանատու խորհուրդի Ե. ՀՏԻԱՆ

Տպար. Գուգր. Պ. ԴԱՐԱՐԻՔԱՆ Արևմտեային